ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեման՝ Աշակերտ-ուսուցիչ համագործակցությունը մշակութային առարկաների գործնական աշխատանքների կազմակերպման գործընթացում

Մասնակից՝ Զաքարյան Արման

Դպրոց՝ Արմավիրի մարզ «Դողսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Վերապատրաստող՝ Նունե Գուրգենի Եսաֆյան

Վաղարշապատ 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ _____3

ԳԼՈՒԽ 1. ԱՇԱԿԵՐՏ –ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ,ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1. Ռազմահայրենասիրական դաստիարակությունը դպրոցում_____5

1.2. Աշակերտ - ուսուցիչ համագործակցությունը գործնական աշխատանքների կազմակերպման գործընթացում_____7

ԳԼՈՒԽ 2. ԱՇԱԿԵՐՏ-ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

2.1. Գործնական մեթոդներ_____11

2.2. ՆԶՊ առարկայի դերն ու նշանակությունը աշակերտների արժեքային համակարգի ձևավորման գործում _____13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ_____20

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ_____ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դեռևս հին ժամանակներից երեխաների դաստիարակության գործընթացով հիմնականում զբաղվել են ուսուցիչները՝ անտեսելով սովորողի ընտանեկան կրթական միջավայրի առանձնահատկությունները: Այժմ ուսումնական հաստատություններում կրթական ծրագրերը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով սովորողի անհատականությունը: Ինչպես հայտնի է, անհատականություն ձևավորվում է ընտանիքում, քանի որ երեխան իր ժամանակի մեծ մասն անցկացնում է ընտանիքում և նրա զարգացման վրա մեծ ազդեցություն ունի ընտանեկան միջավայրը: Միևնույն ժամանակ մեծ է դպրոցի դերը անհատի զարգացման, ձևավորման և դաստիարակության գործում: Կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման կարևորագույն գործոններից մեկը աշակերտ-ուսուցչ համագործակցությունն է: ՈՒսուցիչ և սովորողի, ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ համագործակցությունը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով բարձր մարդկային որակները, էթիկայի նորմերը: Երբ ընտանիքը և ուսումնական հաստատությունը աշխատում են՝ համագոործակցելով երեխայի կարիքին համապատասխան, միջավայրային հարմարեցումների ապահովումը ավելի հեշտ է դառնում, ինչի արդյունքում շահում է հենց երեխան: Այս նախադրյալները նպաստում են, որպեսզի դպրոցն ու ընտանիքն ունենան միասնական ազդեցությումն անձի ձևավվորման գործում, համատեղ օժանդակեն երեխայի ուսման գործընթացին:

Հետազոտական թեմայի նպատակը՝ համագործակցության միջոցով ցույց տալ և ապացուցել, որ գործնական աշխատանքները որքան դրական ազդեցություն կարող են ունենալ ուսումնական հաստատության գործունեության և ուսուցիչ-աշակերտ համագործակցության վրա: Այս ամենին հասնելու համար պետք է.

- կապ ստեղծել դպրոցի և սովորողի միջև,
- ներգրավել աշակերտին դպրոցական գործընթացում, համագործակցել, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ ներգրավել դասարանական, համադպրոցական, արտադպրոոցական, ռազմահայրենասիրական

միջոցառումներին,

- բարենպաստ պայմաններ ստեղծել աշակերտի լիարժեք սոցիալական զարգացման, դաստիարակության գործընթացը կազմակերպելու համար
- ցույց տալ ուսուցչի աշխատանքի արդյունավետության փոխհամագործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության ու դաստիարակության գործընթացում:

Արդիականություն՝ ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպումը և իրականացումն ապահովող համակարգերի արդիականացումը և կայուն զարգացման ապահովումն է ժամանակակից մարտահրավերներին համապատասխան՝ ապահովելով պետական, համայնքային և հասարակական կառույցների ներդաշնակ համագործակցությունը՝ հայրենիքի պաշտպանությանը պատրաստ՝ ֆիզիկապես և հոգեպես զարգացած քաղաքացու ձևավորման գործընթացում:

Հետազոտության թեմայի խնդիրը՝

- ուսումնասիրել աշակերտ-ուսուցիչ համագործակցությունը մշակութային առարկաների գործնական աշխատանքների կազմակերպման գործընթացում, բազմամասնագիտական թիմի գործունեության առանձնահատկությունները, դիտարկել աշակերտ-ուսուցիչ համագործակցության դերը արդյունավետությունը ապահովելու գործում:
- ձևակերպել և հիմնավորել համագործակցության անհրաժեշտությունը դպրոցում, ցույց տալ կարևորությունն ու արդյունավետությունը, ներգրավել ծնողներին իրենց երեխաների գործնական աշխատանքների կազմակերպմանը:
- բացահայտել գործնական աշխատանքների էությունն ու կարևորությունը:

Հետազոտության խնդիրները՝ ուսումնասիրել թեմային առնչվող գրականությունը, իրականացնել գործնական աշխատանքներ, գրանցել արդյունքները և բացահայտել դրանց կազմակերպման հիմնական կառուցվածքը առարկայի դասավանդման ընթացքում:

ԳԼՈՒԽ 1. ԱՇԱԿԵՐՏ -ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ, ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

► Հայրենիքից զատ, Հայրենիքից դուրս ինձ համար խաբուսիկ են բոլոր դրախտները:

-Գարեգին Նժդեհ

1.1. Ռազմահայրենասիրական դաստիարակությունը դպրոցում

Դարեր շարունակ մարդիկ պաշտպանել են իրենց հայրենիքը, բազմապատկել հարստությունը և հպարտացել իրենց նախնիների փառավոր գործերով, որպեսզի երեխաները սիրեն իրենց երկիրը և ի վիճակի լինեն պաշտպանել իրենց հողը, իրենց ժողովրդին: Ռազմահայրենասիրական դաստիարակությունը կօգնի այսօրվա աշակերտներին հասկանալ, թե ինչ է հայրենիքը:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը ներառում է հետևյալ բաղադրիչները.

- երիտասարդներին զինվորական ծառայության մատուցումը
- հայրենասիրության և նվիրվածության դաստիարակումը,
- երիտասարդ սերնդի ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացումը:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը դպրոցում անհրաժեշտ է սկսել առաջին դասից: Մենք կարող ենք սովորեցնել ռազմահայրենասիրական երգեր երեխաներին, ինչպես նաև աշակերտների հետ գնալ հայրենասիրական հուշահամալիրներ: Երեխաները դեռ մանկությունից պետք է իմանան իրենց ժողովրդի անցյալի մասին: Եթե ՆԶՊ-ի դասին ուսուցիչը երեխաների հետ այցելի Երկրորդ համաշխարհային պատերազմի վետերաններին, օգնի նրանց, և դա տեղի ունենա պարբերաբար, երեխաներ մեջ կզարգանա հայրենասիրությունը, հարգանքը ոչ միայն այն մարդկանց նկատմամբ, ովքեր արյուն են թափել մեր հայրենիքի համար, այլև նրանց

ծնողների,հարազատների և ողջ ժողովրդի նկատմամբ:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը դպրոցում կարող է նշանակալի արդյունքների հասնել, եթե դեռահաս երեխաները խաղում են ռազմական և սպորտային խաղեր, ինչպիսիք են, «Արծվի ձագ» կամ «Ջերմային կայծակ», «Սպորտլանդիա» և այլն: Դասընթացի ընթացքում դեռահասները կարող են ոչ միայն զարգանալ ֆիզիկապես, այլև ամրապնդել իրենց մարտական ոգին նկամքի ուժը: Այդ խաղերի միջոցով աշակերտները ձեռք են կբերեն տոկունություն, աշխատասիրություն:

Դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակությունը միջոցառումների համակարգ է, որը օգնում է հայրենասիրության դաստիարակությանը. երեխաների մեջ, իրենց հայրենիքի պաշտպանության պարտականության զգացումը սերմանելու և զարգացնելու, ցանկացած ժամանակ հայրենիքի շահերը պաշտպանելու պատրաստակամությանը:

Պետական համակարգի նկատմամբ հավատարմությունը, անձնական շահերի նկատմամբ պետության շահերի գերակայությունը, օրենքի և բարոյականության խախտումների նկատմամբ անհանդուրժողականությունը հայրենասիրական դաստիարակության ընթացքում երեխաների համար դրված արժեքներն են:

Ռազմական-հայրենասիրական դաստիարակությունը ներառում է նաև աշակերտների սոցիալական գործունեության զարգացումը և պատասխանատվությունը իրենց գործողությունների և գործերի նկատմամբ: Հետևաբար երեխաները ներգրավվում են տարբեր մարզաձևերի և զանգվածային միջոցառումների:

1. 2. Աշակերտ - ուսուցիչ համագործակցությունը գործնական աշխատանքների կազմակերպման գործընթացում

Յուրաքանչյուր ուսուցիչ աշակերտի հետ ունենում է որոշակի հարաբերություններ. մեկի հետ ավելի ուշադիր, մյուսի հետ կարող է լինել մի փոքր պակաս, բայց այդ հարաբերություններն ունեն շատ մեծ նշանակություն: Առաջին հերթին, ուսուցիչը կարող է ունենալ դրական ազդեցություն՝ աշակերտին մղելով ճիշտ ուղղության վրա: Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները երկկողմանի գործընթաց են, և այդ կենդանի գործընթացի երկու կողմերն էլ փոխադարձաբար ներազդում, պայմանավորում ու ձևավորում են միմյանց: Աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերությունների առողջ լինելն առաջին հերթին կախված է նրանից,թե արդյոք աշակերտը կզգա, որ իրեն սիրում են: Այստեղից կծնվի սերն ու վստահությունն ուսուցչի նկատմամբ: Իսկ այդ հարաբերությունների սահմանը որոշողը հենց իրենք են՝ աշակերտն ու ուսուցիչը:

Գործնական աշխատանքների կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում:Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել գործնական աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին: Հատկապես տարրական դասարաններում գործնական աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ , հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:

Աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ գործնական

աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն: Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ[1]: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:

Գործնական աշխատանքները կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակներում՝ անպայմանորեն կառուցելով առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, ինչն էլ պայմանավորվում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը:

Գործնական աշխատանքները բազմազան են պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիաների ընթացքում ձեռք բերած գիտելիքների, տեսածի, լսածի ներկայացում ամենատարբեր միջոցներով, որը կարող է լինել պաստառ, սահիկ և այլն:

Գործնական աշխատանքները կարող ենք իրականացնել ինչպես անհատապես, այնպես էլ խմբերով, ինչպես դպրոցում, այնպես էլ տանը:

Առաջադրանքների ծավալը պլանավորելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների աշխատանքի տեմպը: Ժամանակը ճիշտ կազմակերպելու համար պետք է նախապես կատարել ինքնուրույն աշխատանքի համար պլանավորված առաջադրանքը: Այդ դեպքում մենք առաջադրանքի կատարման համար ուսուցչի կողմի ծախսված ժամանակը անհրաժեշտ է բազմապատկել երեքով, հենց հատկապես այդքան ռոպե է անհրաժեշտ առաջադրանքի կատարման համար: Առաջադրանքի կատարման ընթաքում ուսուցիչը կարող է հասկանալ, թե ինչ տարրեր կարող են արգելակել կամ արագացնել սովորողների աշխատանքը:

Առաջադրանքները պետք է ընտրել այնպես, որ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրության զարգացմանը:

[1] Общие основы педагогики, (под ред Б П Есипова), М. 1967, стр .89,

Սովորաբար, աշակերտները ոչ միաժամանակ են ավարտում գործնական աշխատանքը, եթե, իհարկե, աշխատանքն ունի անհատական բնույթ: Գործնական աշխատանքների համար առաջադրանքներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում սովորողներից պահանջում է տարբեր ժամանակահատված: Այդ պատճառով նպատակահարմար է նախապես պատրաստել առաջադրանքներ, լրացուցիչ առաջադրանքներ՝ արագ աշխատող աշակերտների համար:

Դժվար է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք համապատասխանում են բոլոր աշակերտների ներուժին: Եթե առաջադրվում է պարզ, միատիպ վարժություններ, օրինակ՝ բազմապատկման կամ բաժանման, ապա առաջադրանքների տարբերակումը կարգավորվում է ծավալով: Առավել դժվար է, օրինակ ընտրել յուրաքանչյուր աշակերտի ներուժի համապատասխան առաջադրանքներ: Այդ պատճառով նպատակահարմար է առաջադրել տարբերակված առաջադրանքներ՝ հաշվի առնելով սովորողների առանձին խմբերի ներուժը:

Սակայն պետք է նշել, որ ըստ բարդության աստիճանի տարբեր առաջադրանքներ ընտրելը բավականին բարդ է: Ընտրել հեշտ առաջադրանք, որը համապատասխանում է թույլ աշակերտի ներուժին, դժվար չէ: Բայց այստեղ մի մեծ վտանգ է թաքնված: Եթե թույլ կարողություններ ունեցող աշակերտը դասից դաս անընդհատ դյուրին աշխատանք կատարի նույն պահանջով, ապա այդպես կարող ենք խորացնել նրա զարգացման հետ կապված խնդիրները: Այդ պատճառով այդպիսի սովորողների համար ճանաչողական առաջադրանքների ընտրության ընթացքում ուսուցիչն իր առջև նպատակ է է դնում.Սկզբում աշխատանքում ներառել պարզ առաջադրանքներ, ապա աստիճանաբար յուրացման համար ներմուծել առավել բարդ նյութեր:

Գործնական աշխատանքի համար ցանկալի է առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում: Միայն այդ դեպքում գործնական աշխատանքը 8 կնպաստի սովորողների ճանաչողական ունակությունների ձևավորմանը և նախաձեռնողականության դրսևորմանը:

Գործնական աշխատանքը կազմելիս ցանկալի է, որ նախատեսվող

առաջադրանքները հետաքրքրեն սովորողներին: Առաջադրանքների բովանդակությունը պետք է մատչելի լինի աշակերտին, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միևնույն ժամանակ գտնվի նրանց զարգացման «մերձակա գոտում», պարունակի որոշակի դժվարություն, որը երեխան կարող է հաղթահարել:

Յուրաքանչյուր թեմայի շուրջ առաջադրանքների ընտրության ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հասկացության բոլոր հատկանիշների բազմակողմանիորեն ամրապնդմանը, հստակ առանձնացնել այն կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևակերպել և ամրապնդել: Պատահականության բացառումը նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը: Առաջադրանքների համակարգը պետք է կազմակերպել փուլ առ փուլ: Անհրաժեշտ է սկսել տիպային առաջադրանքներից, մանրամասն բացատրել դրանց լուծման մեթոդները: Ընդ որում աշակերտներին պետք է առաջարկել գործողություններ կատարել ըստ օրինակի: Այնուհետև անհրաժեշտ է առաջադրել նույնատիպ առաջադրանքներ: Հետո կարելի է առաջարկել առաջադրանքներ՝ չափազանց համառոտ հրահանգ տալով:

Վերջին փուլում անհրաժեշտ է առաջարկել առաջադրանքներ ամբողջովին ինքնուրույն կատարման համար:Այս փուլում նպատակահարմար է սովորողներին առաջարկել ստեղծագործական բնույթի առաջադրանքներ:

ԳԼՈՒԽ 2. ԱՇԱԿԵՐՏ-ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

2.1. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Գործնական մեթոդների շարքում են՝

1. Վարժություններ
2. Գործնական աշխատանքներ
3. Լաբորատոր աշխատանքներ
4. Ճանաչողական խաղեր
5. Դաս-միջոցառումները

Ժամանակակից աշակերտին անհրաժեշտ են ոչ միայն տեսական գիտելիքներ տարբեր առարկաներից, այլ նաև այդ գիտելիքները աշխատանքային և հոգևոր գործունեության տարբեր ոլորտներում կիրառելու պրակտիկ կարողություններ ու հմտություններ:

Վարժություններ

Վարժությունների մեթոդի դեպքում սովորողները բազմիցս կատարում են միևնույն գործողությունները, այսինքն վարժվում են յուրացված տեսական նյութը պրակտիկայում կիրառելու մեջ, դրանով իսկ խորացնելով իրենց գիտելիքները, ձեռք բերելով համապատասխան կարողություններ ու հմտություններ, ինչպես նաև զարգացնելով իրենց մտածողությունն ու ստեղծագործական ընդունակությունները:

Կարող են լինել բանավոր կամ գրավոր վարժություններ, պրակտիկ առաջադրանքներ տեխնոլոգիայից և այլն:

Գործնական աշխատանքներ

Գործնական աշխատանքների մեթոդի հիմնական ֆունկցիան ձեռք բերած գիտելիքների կիրառումն է գործնական խնդիրների լուծման ընթացքում: Այն նաև լուծում է սովորողների գիտելիքների խորացման ու ամրապնդման խնդիրը:

Աշակերտների կողմից գործնական աշխատանքների անմիջական կատարմանը նախորդում է ուսուցչի բացատրությունը, որը նպատակ ունի տեսականորեն

իմաստավորել աշխատանքը և գործողությունների շարքի ցուցադրումը: Դրանից հետո աշակերտները կատարում են աշխատանքը, իսկ ուսուցիչը վերահսկում է նրանց գործողությունները:

Լաբորատոր աշխատանքներ

Լաբորատոր աշխատանքների մեթոդի հիմնական ֆունկցիան սովորողների մեջ գիտափորձարարական հետազոտական աշխատանքի տարրական կարողություններ ձևավորելն է:

Լաբորատոր աշխատանքները սովորեցնում են աշխատել տարատեսակ սարքերի և նյութերի հետ, ձևավորում են չափումներ, հաշվարկներ կատարելու, փորձի արդյունքներն ամփոփելու, վերլուծելու և եզրակացություններ անելու կարողություններ:

Ճանաչողական խաղեր

Որպես ուսուցման մեթոդ խաղը իրականության մոդելավորման մի ձև է, հատուկ կազմակերպված իրադրություն, որից սովորողներին առաջարկվում է ելք գտնել:

Խաղի մեթոդի հիմնական ֆունկցիան սովորողի ճանաչողական գործունեությունը իրականությանը մոտեցնելն է: Այս խաղերը լայնորեն կիրառվում են հատկապես ՆԶՊ առարկայի դասավանդման ընթացքում[2]:

Գործնական մեթոդների արդյունավետությունը «ՆԶՊ» առարկայի դասավանդման ընթացքում ներկայացնենք դիագրամայի տեսքով



[2] Թորոսյան Կ.,, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ.,

ԳԼՈՒԽ 2.2. ՆԶՊ ԱՌԱՐԿԱՅԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՆԶՊ առարկան զարգացնում է երիտասարդների որոշակի կարողություններ ու ձևավորում հմտություններ՝ հստակ գործելու այնպիսի ծայրահեղ իրավիճակներում, ինչպիսիք են՝ մարտական գործողությունները կամ արտակարգ այլ իրավիճակներ: Նման պատրաստությունը, նախնական փորձի շնորհիվ ձեռք բերած գիտելիքները հնարավորություն են տալիս սովորողներին հոգեբանորեն պատրաստ լինել արտակարգ իրավիճակներին, բարդ իրադրությունում ոչ միայն պահպանել սեփական կյանքն ու առողջությունը, այլև արագ ու արդյունավետ իրականացնել մարտական կամ այլ առաջադրանքներ: ՆԶՊ առարկայի ուսուցումը ուղղված է նաև հատուկ վարժանքներով սովորողների բարոյահոգեբանական հատկանիշների ձևավորմանն ու ուժեղացմանը (հայրենասիրություն, կարգապահություն, պատասխանատվություն, ինքնավստահություն, կոլեկտիվիզմ), որոշակի ունակությունների զարգացմանը և նոր կարողությունների առաջացմանը (ֆիզիկական ունակություններ, ֆիզիոլոգիական հատկանիշներ, հիշողության, ուշադրության կենտրոնացում ու փոխատեղում, վերլուծական մտածողություն)[3]:

ՀՀ ԶՈՒ ԵՎ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀՀ զինված ուժերի խնդիրներն են՝

- Հայաստանի Հանրապետության պաշտպանության ապահովումը,
- տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության պահպանումը,
- հնարավոր զինված հարձակմանը հակահարված տալը,
- միջազգային պայմանագրերով սահմանված պարտավորությունների կատարումը:

Համազարկային կրակի ռեակտիվ համակարգ «Գրադ»ՀՀ զինված ուժերի կառուցվածքը ՀՀ զինված ուժերը կազմված են՝

- զինվորական կառավարման կենտրոնական մարմնից՝ պաշտպանության նախարարություն և գլխավոր շտաբ,
- զորամիավորումներից՝ բանակ, բանակային կորպուս,
- զորատեսակներից՝ ցամաքային զորքեր, հրթիռահրետանային, հակաօդային

[3] https://hy.tierient.com/

պաշտպանության զորքեր, ռազմաօդային ուժեր,

● զորամասերից՝ դիվիզիա, գունդ:

Ցածր դասարաններում ավելի շատ ուշադրություն է դարձվում **անհատական պատրաստությանը**, իսկ բարձր դասարաններում՝ **խմբային (ջոկային) պատրաստվածությանը**: Կարևորվում է ջոկի անդամների փոխգործողությունը:

Դաշտային (ճամբարային) պարապմունքներ: Այս պարապմունքները հնարավորություն են տալիս իրականին մոտ պայմաններում մատուցել նյութը, ցուցադրել պահանջվող գործողությունները, իսկ սովորողներին՝ գործնական վարժանքներով յուրացնել թեման: Բացի երկարաժամկետ ճամբարային փորձաշրջանից, նպատակահարմար է կազմակերպել դաշտային պարապմունքներ շաբաթ կամ կիրակի օրերին՝ աշակերտների և ծնողների համաձայնությամբ, դպրոցի ղեկավարության գիտությամբ: Ճամբարային պայմանները առավել մեծ հնարավորություններ են ստեղծում պարապմունքներն անցկացնել ինչպես ցերեկային, այնպես էլ երեկոյան ժամերին, ուսուցանել առանձին թեմաներ («Կողմնորոշում աստղերով», «Տեղաշարժ մթության մեջ», «Պահակային ծառայության անցկացում», «Քողարկված կրակատեղի պատրաստում» և այլն): Ճամբարային պատրաստության և ռազմամարզական խաղերի ընթացքում կարող են լուծվել հետևյալ խնդիրները՝ բնական միջավայրում տեսական գիտելիքների փորձնական ստուգում և ամրապնդում, հմտությունների և կարողությունների զարգացում անհատական և խմբային վարժանքներով, իրավիճակների մոդելավորում և իրական պայմաններում սովորողների խմբային համագործակցության զարգացում, հոգեբանական կայունության ապահովում, սեփական ունակությունները ճանաչելու և ինքնադրսևորվելու հնարավորություն[4]:

«Հայաստանի Հանրապետության հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանի աշակերտների ռազմամարզական ճամբարի կարգն» արդեն ներկայացվել է հանրային քննարկման: Ճամբարի ծրագիրը համարվում է ՆԶՊ առարկայի 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-

[4] Ասատրյան Լ., Հակոբյան Գ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, Ե., 2011 թ., 178 էջ:

րդ դասարանների առարկայական ծրագրի գործնական և կիրառական մասը:

Շեֆ-զորամաս այցելությունը: Սա հնարավորություն է տալիս սովորողներին անմիջականորեն ծանոթանալ բանակային առօրյային, մարտական տեխնիկային, սպառազինության տեսակներին և անձնակազմի մարտական պարապմունքներին:

Արտադասարանական խմբակների կազմակերպումը: Շատ արդյունավետ է դպրոցներում արտադասարանական «Պատանի հետախույզ», «Պատանի լեռնագնաց» և այլ խմբակների ձևավորումը, որոնք հնարավորություն են տալիս ապահովել ինտենսիվ ուսուցում և կարգապահություն[5]:

Ներառական կրթությունը «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի շրջանակում կազմակերպվում է՝ ելնելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների շահերից, ֆիզիկական և մտավոր ընդունակություններից ու կարողություններից[6]:

Նախագծում կարևորվել է նաև միջառարկայական կապերի զարգացումը, ուսուցողական նյութերի պարզեցումը, արդիական ու կարևոր թեմաներ ներմուծելն ու ոչ պրոֆիլայիններից ձերբազատվելը, ինչպես նաև ավելի արդյունավետ մեթոդական մոտեցումների, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառումը:

[5] Краевский, В. В. Методология педагогического исследования: Пособие для педагогаисследователя / В. В. Краевский. - Самара, 1994.

[6] https://sportedu.am/wp-content/uploads/2020/12/Tez-2020-1.pdf /

Թեստի օրինակ

Աշակերտի անուն, ազգանուն _____

1. Ավտոմատով կրակ վարելու քանի՞ հիմնական դիրք կա:

   ☐ 1

   ☐ 4

   ☐ 3

   ☐ 8

2. Ի՞նչ է ներառում կրակելու գործողությունը

   ☐ *նշանոցի ու փոխադրիչի դնելը *Ավտոմատի կոթը ուսին հարմարեցնելը*Նշան բռնելը*Ձգան քաշելը *Հրաձգության ժամանակ ավտոմատը պահելը

   ☐ Ոչինչ չի ներառում

   ☐ Նշան բռնել

3. Ի՞նչ դիրքեր են ցուցադրված նկարում.

   ☐ Պառկած, ծնկած, կանգնած կրակելիս

   ☐ Ծնկած և կանգնած կրակելիս

   ☐

4. Ո՞ր կազմի զինվորական կոչումների տարբերանշաններն են պատկերված նկարում.

   ☐ Սպայական կազմի

   ☐ Շարքային

5. Ե՞րբ է սկսվել Հայրենական մեծ պատերազմը, քանի՞ տարի է տևել այն:

   ☐ 1941թվ. Հունիսի22-ին, 4 տարի

   ☐ 1945թվ. Մայիսի 5-ին, 2 տարի

   ☐ 1948թվ. Ապրիլի 24-ին, 1 տարի

6. Նշե՛ք այն զինատեսակը, որոնք ըստ միջազգային օրենքների հայտարարվել է օրենքից դուրս:

   ☐ կալաշնիկով

   ☐ Կենսաբանական և քիմիական զենքը

   ☐ Մարտական զենք

7. Քանի՞ տեսակի տարհանում գիտեք:

   ☐ Մասնակի և համընդհանուր

   ☐ Առաջնային և ընդհանուր

   ☐ Ընդհանուր և մասնակի

8. Վարակիչ հիվանդությունների հարուցիչների ոչնչացումն արտաքին միջավայրում կոչվում է

   ☐ Գազազերծում

   ☐ Ախտահանում

   ☐ Վարակազերծում

9. Ե՞րբ ձևավորվեց հայկական կորպուսը

   ☐ 1917թվ. Նոյեմբերին

   ☐ 1918թվ. Հոկտեմբերին

   ☐ 1917թվ. Հունվարին

10. Որտե՞ղ են քննարկվում զինվորականների զանցանքները.

   ☐ Զինվորների ժողովում

   ☐ Դատարաններում

   ☐ Զորամասում

ՆԶՊ

Ուսուցիչ՝ Զաքարյան Արման
Արմավիրի մարզի <<Դողսի միջնակարգ դպրոց>>

arevikh229@gmail.com Մտնել մյուս հաշիվ

Չհամօգտագործվող

* Ցույց է տալիս, որ հարցին պատասխանելը պարտադիր է

1. Ավտոմատով կրակ վարելու քանի՞ հիմնական դիրք կա: *

- 3
- 8
- 5
- 1

2. Ի՞նչ է ներառում կրակելու գործողությունը *

- *Նշանոցի ու փոխադրիչի դնելը *Ավտոմատի կոթը ուսին հարմարեցնելը*Նշան բռնելը*Զգան քաշելը *Հրաձգության ժամանակ ավտոմատը պահելը

Դաս-միջոցառումներ ՆԶՊ-ի դասերին

Դողսի միջնակարգ դպրոց
6 декабрь 2021 г. ·

Հզոր է այն ազգը, որի զավակները գիտեն իրենց պատմությունը և անմնացորդ սիրում են հայրենի երկրի հողն ու ջուրը:
Ու հանուն հայրենի եզերքի, հաղթանակը սրտերում մեր տղաներից մեկը՝ Արտակ Գրիգորյանը գնաց դեպի կանչող հավերժություն , դեպի անմահություն:
Նա մեր կողքին է , մեր սրտերում, մեր հուշերում:🙏
Մեր քաջորդի Արտակ Գրիգորյանի հիշատակը վառ պահելու համար դպրոցի դասասենյակներից մեկը անվանակոչվեց ի հիշատակ մեր հերոս Արտակ Գրիգորյանի: 🇦🇲🙏



Դողսի միջնակարգ դպրոց
10 февраль 2022 г. ·

Պահպանենք, սիրենք և խնամենք պատմության և մշակույթի հուշարձանները:
Չի՛ կարելի
❗ Գրել հուշարձանների պատերին և փչացնել դրանք:
❗ Աղբ թափել հուշարձանների տարածքում :
❗ Հուշարձանների պատերին բարձրանալ:

Դողսի միջնակարգ դպրոց
31 январь 2022 г. ·

💪🇦🇲Շնորհավոր տոնդ՝ Հայոց Բանակ
Թող ամենօրյա խաղաղությունը, ողջ գեղեցկությամբ՝ Ձեր անբաժան ուղեկիցը լինի: Մեր առավոտները Ձեր շնորհիվ խաղաղ ու բարի են բացվում:
Հայոց աշխարհի անհաղթ զինվորներ, կորստի ցավ կա մեր երակներում, սակայն դուք գոտեպնդվեք, և հպարտացեք մեր փառավոր հաղթանակներով: Եղեք արի, կամքով բարի, ապրեք Աստծո օրհնությամբ:
Բանակի օրը բանակի համար էր ծնվել մեր դպրոցի շրջանավարտ Արտակ Սեյրանի Գրիգորյանը ,
ով մնաց հավերժ բանակի նվիրյալ🙏❤️🕊️

Տոնդ շնորհավոր հայոց բանակ🇦🇲
Ծնունդդ շնորհավոր անմահ հերոս🧡

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշակերտ և ուսուցիչ համագործակցությունը ավելի արդիական և պահանջված է: Աշակերտ-ուսուցիչ համագործակցությունը բավականին պատասխանատու գործընթաց է: Կողմերը պետք է քաջ գիտակցեն, որ իրենց համագործակցության հիմքում կրթության առաջնային շահերի՝ սովորողների սովորելու իրավունքի իրականացումն է: Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա: Կարևոր հանգամանք է նաև մանկավարժական խորհրդատվությունը, երկու կողմերի փոխադարձ հարգանքն ու այն գիտակցումը, որ կողմերի արդյունավետ աշխատանքն ուղիղ համեմատական է արժեքային համակարգ ունեցող, դաստիարակված ու գիտակից անձնավորության ձևավորմանը: Ուրեմն կարողանանք ձևավորել կյանքի լայն իմացություն և տաղանդ, կարողանանք ճիշտ կրթության միջոցով դաստիարակել ու կերտել երկրի, ինչու չէ նաև աշխարհի ապագա պատմությունը:

Իմ հետազոտական աշխատանքում եկա այն եզրահանգման, որ ուսուցիչը, մասնագետն իր մասնագիտական աճը ապահովելու համար պետք է յուրաքանչյուր օր արձանագրի նորը, նորամուծությունը հեշտությամբ յուրացնի, կարողանա համագործակցել թե՛ գործընկերների, թե՛ շահագրգիռ կողմերի հետ աշակերտին մատչելի ձևով սովորեցնելու գործընթացում կիրառի և՛ առարկայական, և՛ կյանքի հմտություններ, քանի որ առանց համագործակցության դպրոցում փոփոխություններն անհնարին են:

ՆԶՊ առարկայի ուսուցման որակի բարձրացումը ՀՀ-ում միշտ եղել է հրամայական: Պատերազմի մշտական վտանգը ստիպում է վաղ հասակից աշակերտներին զինել գիտելիքներով զինվորական պատրաստության մասին և գործնականում ծանոթացնել զենքին,զինամթերքին, դրա օգտագործման ձևերին և անվտանգության կանոններին: Վերլուծելով չափորոշչային պահանջները և ուսումնասիրելով դասագրքերը՝ ակնհայտ է դառնում, որ առարկային հատկացված սուղ ժամաքանակն արդյունավետ օգտագործելու համար առաջնային անհրաժեշտություն է ուսումնական նյութերի ճիշտ պլանավորումը և դասացուցակի նպատակային լինելը [7]:

[7] Գիտությունը սպորտում. Արդի հիմնախնդիրներ, Գիտամեթոդական պարբերական:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ

1. Общие основы педагогики, (под ред Б П Есипова), М. 1967, стр .89,
2. Թորոսյան Կ.,, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ.,
3. https://hy.tierient.com/
4. Ասատրյան Լ., Հակոբյան Գ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, Ե., 2011 թ., 178 էջ:
5. Краевский, В. В. Методология педагогического исследования: Пособие для педагогаисследователя / В. В. Краевский. - Самара, 1994.
6. https://sportedu.am/wp-content/uploads/2020/12/Tez-2020-1.pdf /
7. Գիտությունը սպորտում. Արդի հիմնախնդիրներ, Գիտամեթոդական պարբերական:
8. Հովհաննես Գաբրիելյան, մեթոդական ձեռնարկ, Երևան, 2014:
9. https://sportedu.am/wp-content/uploads/2020/12/Tez-2020-1.pdf